ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի գլխավորած պատվիրակության՝ Իրանի Իսլամական Հանրապետություն (Թեհրան) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Կարեն Անդրեասյան, Գրիգոր Մինասյան, Արամ Հովհաննիսյան և Արմենուհի Հարությունյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնները՝ ՀՀ արդարադատության նախարար, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ և ՀՀ արդարադատության նախարարության իրավական փոխօգնության վարչության պետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Իրանի Իսլամական Հանրապետություն (Թեհրան), 2022թ. փետրվարի 20-ից 22-ը:

Հրավիրող կողմը՝ Իրանի Իսլամական Հանրապետության արդարադատության նախարար Ամին Հոսեյն Ռահիմի:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Իրանի Իսլամական Հանրապետության արդարադատության նախարար Ամին Հոսեյն Ռահիմի, ԻԻՀ Գերագույն դատարանի նախագահ Սեյեդ Ահմադ Մորթազավի Մողադամիի, ԻԻՀ փոխնախագահ Մոհամմեդ Դեղհանիի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ երկկողմ հանդիպումներին:

Քննարկված թեմաները՝ Դատական ակտերի հարկադիր կատարման, հանրային ծառայությունների մատուցման ոլորտում, դատական և իրավական, հակակոռուպցիոն, ինչպես նաև քրեական արդարադատության բնագավառներում ՀՀ-ում ընթացքի մեջ գտնվող բարեփոխումներին, քրեական գործերով իրավական օգնության և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

2022թ. փետրվարի 20-ից 22-ը տեղի է ունեցել ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի գլխավորած պատվիրակության այցը Իրանի Իսլամական Հանրապետություն:

Այցի ընթացքում ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է ԻԻՀ արդարադատության նախարար Ամին Հոսեյն Ռահիմիի հետ:

Հանդիպման ընթացքում Կողմերը քննարկել են իրավական ոլորտին առնչվող մի շարք հարցեր:

Երկու երկրների արդարադատության նախարարները ստորագրել են համագործակցության հուշագիր, որի շրջանակում կողմերը կարող են համագործակցել՝ մարդու իրավունքների, կոռուպցիայի դեմ պայքարի, երեխաների իրավունքների և միջազգային իրավունքի, ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի (ՄԱԿ, ԿԴԿ) իրականացման և մի շարք այլ ոլորտներում:

Ձեռք են բերվել համագործակցությունը խորացնելու պայմանավորվածություններ, այդ թվում՝ «ՀՀ և ԻԻՀ միջև քաղաքացիական և քրեական գործերով իրավական օգնության մասին» համաձայնագրի գործողությունն ընդլայնելու վերաբերյալ հանձնաժողովի ձևավորման մասին:

Կարեն Անդրեասյանի գլխավորած պատվիրակությունն Իրանի Իսլամական Հանրապետությունում հանդիպում է ունեցել ԻԻՀ Գերագույն դատարանի նախագահ Սեյեդ Ահմադ Մորթազավի Մողադամիի հետ:

Իրանի գերագույն դատարանի նախագահը իր գոհունակությունն է հայտնել ՀՀ իշխանությունների գործադրած ջանքերի համար տարածաշրջանում խաղաղությունը վերականգնելու և կայունություն հաստատելու ուղղությամբ:

ԻԻՀ գերագույն դատարանի նախագահը սիրով ողջունել է ՀՀ պատվիրակության այցը բարեկամ Իրան և նախարարին է ներկայացրել ԻԻՀ դատական համակարգը, մասնավորապես՝ ԻԻՀ գերագույն դատարանի գործառույթների շրջանակը:

Փոխադարձաբար ՀՀ արդարադատության նախարարի կողմից ներկայացվել է ՀՀ դատական համակարգը, ՀՀ արդարադատության նախարարի գործառույթների շրջանակը, Սահմանադրական բարեփոխումների կարևորությունը և Դատական համակարգի բարեփոխումների տեսլականը՝ միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա այն առավել գործուն դարձնելու առումով:

ԻԻՀ գերագույն դատարանի նախագահը հատուկ շնորհակալություն է հայտնել ԻԻՀ 7 դատապարտյալների պատժի հետագա կրման նպատակով հայրենիք վերադարձնելու համար նախարարի ջանքերի համար և հույս է հայտնել շարունակական համագործակցության:

Պաշտոնական այցով Թեհրանում գտնվող ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի գլխավորած պատվիրակությունը Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի նստավայրում հանդիպում է ունեցել ԻԻՀ փոխնախագահ Մոհամմեդ Դեղհանիի հետ:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են ինչպես իրավական, այնպես էլ տնտեսական ոլորտներում հայ-իրանական համագործակցության առանձնակի կարևորություն ունեցող հարցեր:

ՀՀ արդարադատության նախարարն այցի ընթացքում կարևորել է ՀՀ-ում դատապարտված ԻԻՀ քաղաքացիների իրավունքների լիարժեք պաշտպանությունը, նաև դատական ընթացակարգերից խուսափելու համար ՀՀ և ԻԻՀ միջև գործող քաղաքացիական և քրեական գործերով իրավական օգնության մասին պայմանագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը:

Քննարկվել է հայ-իրանական հարաբերությունների հետագա արդյունավետ զարգացման համար Իրան-Հայաստան 400Կվտ. էլեկտրահաղորդման գծի շինարարությունն ավարտին հասցնելը, «Պարսից ծոց-Սև ծով» բազմակողմ համաձայնագրի երկու երկրների դիրքորոշումների համաձայնեցման համար փորձագետների 6-րդ հանդիպման շուտափույթ իրականացումը, միջազգային-միջպետական ճանապարհների կառուցմանը ՀՀ իշխանությունների հետևողականությունը և դրանց կարևորությունը ՀՀ և Իրանի տնտեսական

զարգացման համար: Կողմերը քննարկել են նաև Արաքս գետի աղտոտումը բացառելուն ուղղված մի շարք հարցեր:

Երկուստեք պայմանավորվածություն է ձեռքբերվել էլ ավելի մեծ ջանքեր գործադրել զարգացնելու հայ-իրանական հարաբերությունները:

ՀՀ արդարադատության նախարար

Recoverable Signature

X

Karen Andreasyan

Signed by: ANDREASYAN KAREN 2009770196

Կարեն Անդրեասյան

23.02.2022թ.